

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Ալաշկերտի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

ՀՀ Արմավիրի մարզի Ալաշկերտ գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր 3-1-2):

Առաջատար մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ սահմանված կարգով մասնակցում է համայնքի հողերի գոտիավորման ու օգտագործման սխեմայի կազմման աշխատանքներին ինքնակամ հողազավթման կանխման, կասեցման և հաշվեկշռի կազմման աշխատանքներին, իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ է՝

- Միջնակարգ կրթություն,

- Սույն պաշտոնի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ իմացություն,

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն: Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2015 թ. մարտի 27-ին, ժամը 12:00 -ին, Ալաշկերտի գյուղապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները Աշաշկիրտի գյուղապետարան կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում մրցույթային հանձնաժողովի անունով (ծևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),

- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակների հետ միասին.

- հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 3-ի N 310-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

- հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

- արական սեռի անձինք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենները,

- մեկ լուսանկար 3X4 սմ չափի,

- անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրերին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Ալաշկերտի գյուղապետարան և ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՄ-ների վարչություն, հասցեն՝ Աբովյանի 71: Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10.00-ից 18.00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2015 թվականի մարտի 12-ը: